# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-22/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 4 | «Անբասիր ծառայության համար» մեդալն իրենից ներկայացնում է 38 մմ տրամագծով երկկողմ պատկերով շրջան՝ վրադիր էլեմենտներով: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից: Մեդալը երկու կողմից եզրագծված է 1մմ լայնությամբ և 1 մմ բարձրությամբ շրջանակով: Մեդալի դիմային երեսը եզրազարդված է ռելիեֆային պսակով, որի ձախ թևը դափնե ճյուղ է, իսկ աջը՝ կաղնու ճյուղ: Մեդալի կենտրոնում վրադիր էլեմենտի ձևով տեղակայված է Կոմիտեի ռելիեֆային խորհրդանիշը՝ 30 մմ տրամագծով, որի եռագույն շրջանը պատված է գունավոր էմալով (կարմիր, կապույտ, նարնջագույն): «Անբասիր ծառայության համար» երկրորդ աստիճանի մեդալն ոսկեպատված է 999 հարգի ոսկով, հիմնական գույնը ոսկեգույնն է: Մեդալի դարձերեսին առկա է «II ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» հորիզոնական քառատող ռելիեֆային գրառումը, որի ներքևում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալն ունի հնգանիստ կախիչ՝ 39x27x39x24x24 չափերի, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով միմյանց զուգահեռ և 2 մմ հեռավորության վրա անցնում են 2 մմ լայնությամբ ոսկեգույն 2 զոլակներ, իսկ ժապավենի կողքերը եզերված են 2 մմ լայնությամբ մոխրագույն զոլակներով: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՄԴԿ-22/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 4 | |